

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի Եկամուտներ.....	10
5.2. Բյուջեի ծախսեր	10
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	11
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ և վարկեր	13
7. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, 2018-2019թթ., %




2019թ. սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը փոքր-ինչ աճել է՝ կազմելով 7.1% (նախորդ ամսվա ցուցանիշը՝ 7.0%): Նախորդ տարվա վերջում ՏԱՑ-ի տեմպը դանդաղման միտում ուներ, ինչը նշանակում է, որ ցածր բազայի նկատմամբ 2019թ. աճը տարեվերջին կարող է արագանալ: Ընթացիկ զարգացումները ցույց են տալիս, որ բազային էֆեկտի ազդեցությունը պահպանվում է:

Ամսական աճը, այսինքն՝ օգոստոս ամսվա աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ, կազմել է 7.5%, որը 0.1 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Տնտեսական ակտիվության աճը ապահովող ճյուղերը գրեթե չեն փոխվել: Ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը՝ 6.4 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության աճին նպաստել են նաև արդյունաբերության (1.8 տոկոսային կետ), առևտրի (1.0 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:


ՏԱՑ-ին բացասական նպաստում է ունեցել գյուղատնտեսությունը, որի իրական թողարկման ծավալը ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 4.8 տոկոսով՝ ՏԱՑ-ին բացասական նպաստելով 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-սեպտեմբեր, %



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Արդյունաբերության ոլորտի աճը շարունակում է արագանալ: 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 9.7 տոկոսով, ընդ որում՝ արդյունաբերության աճի տեմպն արդեն ամիսներ շարունակ ունի արագացման միտում: Սակայն, արդյունաբերության աճի նպաստումը իրական ՀՆԱ-ի աճին մնում է ցածր:


^{1*} Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 6.7 տոկոսային կետ), որի կառուցվածքում աճում են գրեթե բոլոր ենթաճյուղերը: Մասնավորապես, նշանակալի են ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության աճը (աճը՝ 60.0%, նպաստումը՝ 3.2 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների արտադրության (աճը՝ 17.7%, նպաստումը՝ 2.5 տոկոսային կետ) և սննդամթերքի արտադրության (աճը՝ 8.0%, նպաստումը՝ 2.4 տոկոսային կետ) աճերը²:

Հատկանշական է, որ ընթացիկ տարվա օգոստոսին արդյունաբերության աճի տեմպի արագացումը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության աճի արագացմամբ (14.8% նախորդ ամսվա 9.5%-ի փոխարեն), որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին 1.9 տոկոսային կետից դարձել է 2.8 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մետաղական հանքաքարի արդյունահանման 15.4 տոկոս աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերությանը կազմել է 2.8 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճի տեմպը կայունացել է ցածր մակարդակում:

Հունվար-սեպտեմբեր ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է նույնը, ինչ նախորդ ամսվա ցուցանիշը՝ 4.4 տոկոս, որը բավական ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

² Արդյունաբերության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-օգոստոս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-սեպտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Ծառայությունների ոլորտը դեռևս մնում է տնտեսության ամենաարագ աճող ճյուղը՝ չնայած տարեսկզբի համեմատ աճի տեմպի որոշակի դանդաղմանը: 2019թ. ինն ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ այս ճյուղն աճել է 15.5 տոկոսով, որը 3.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.8%):

Ծառայությունների աճի կառուցվածքը շարունակում է մնալ մտահոգիչ: Այս ճյուղի աճին ամենամեծ նպաստում ունեցողը մնում է մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար-օգոստոս ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 5.5 տոկոսային կետով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեության աճը նախորդ ամսվա 16.3 տոկոսից դարձել է 17.2 տոկոս, իսկ նպաստումը 3.5 տոկոսային կետից՝ 3.7, որը կարող է պայմանավորված լինել մեքենաների ներմուծման կտրուկ աճով պայմանավորված վարկերի նկատմամբ պահանջարկի աճով: Ծառայությունների աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների մյուս բոլոր ենթաճյուղերի աճերը որոնցից նշանակալի է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում» (2.6 տոկոսային կետով) ենթաճյուղի նպաստումը³:


³ Ծառայությունների կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-օգոստոս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-սեպտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 6. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-օգոստոս, %⁴



1.4. Առևտուր

Գծապատկեր 7. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



⁴ 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Առևտրի ծավալների աճի տեմպը դանդաղում է: Հունվար-սեպտեմբեր ամիսներին առևտրի ոլորտի կուտակային աճի տեմպը դանդաղել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով է 8.8 տոկոս, որը 1.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 8. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Արտահանման աճը վերականգնվում է: Ինչպես և ՏԱՑ-ը, արտահանման աճի արագացումը առավելապես կապված է նախորդ տարվա արտահանման ծավալների աճի դանդաղման (ցածր բազայի) հետ: Հունվար-սեպտեմբերին արտահանումն աճել է 7.9 տոկոսով: Կրկին վերանայվել են արտաքին առևտրի տվյալները, ինչի արդյունքում հունվար-օգոստոս ամիսների արտահանման աճը մեծացել է 0.4 տոկոսային կետով՝ դառնալով 5.0 տոկոս:

Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.5, 2.8 և 2.1 տոկոսային կետ: Մինչդեռ «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են՝ բացասական նպաստելով արտահանման աճին (համապատասխանաբար -2.9 և -1.8)⁵:

⁵ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ներմուծման աճը նույնպես վերականգնվում է: Հունվար-սեպտեմբեր ամիսներին այն աճել է 4.7%-ով, որը, սակայն, շարունակում է բավական ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Արտաքին առևտրի տվյալների վերանայման հետևանքով՝ հունվար-օգոստոս ամիսների ներմուծման աճը 0.7 տոկոսից դարձել է 1.7 տոկոս:


Ներմուծման ծավալների աճը առավելապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման 43.7% աճով, որը ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 3.4 տոկոսային կետով: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել կամ աճել են աննշան չափով: Առավել նշանակալի է «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների 13.6 տոկոսով կրճատումը, որը ներմուծման ընդհանուր աճին նպաստել է -2.5 տոկոսային կետով: Ընդ որում՝ այս ապրանքախմբի ներմուծման կրճատումը արագացել է՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշից վատթարանալով 1.3 տոկոսային կետով: Սա մտահոգիչ ազդանշան է, քանի որ այս ապրանքախմբում ընդգրկված են հիմնականում ներդրումային բնույթի ապրանքներ, հետևաբար դրա կրճատումը մատնանշում է ցածր ներդրումային պահանջարկի մասին:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2019թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.6 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 4.1 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.8, 1.8 և 3.9 տոկոս: Միջին


ամսական անվանական աշխատավարձը կազմել է 178,633 դրամ, ընդ որում պետական հատվածում՝ 154,914 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 190,717 դրամ:


Գծապատկեր 10. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-սեպտեմբեր, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ


**Գծապատկեր 11. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, %
(աճը նշանակում է << դրամի արժևորում)**





2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 0.1 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.5 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 6.3 տոկոսով:

Գծապատկեր 12. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին ամսական անվանական փոխարժեքը, դրամ



ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ տարեսկզբից ուներ արագ արժևորման միտում, որը, սակայն, կայունացել է վերջին երկու ամիսներին՝ շնորհիվ փոխարժեքի շուկային ԿԲ-ի ակտիվ միջամտության: Մասնավորապես, այս ամիսների ընթացքում ԿԲ-ն շուկայից գնել է մոտ 500 մլն ԱՄՆ դոլար արտարժույթ:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտներն աճում են պլանավորվածից բարձր տեմպերով: 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ընդհանուր եկամուտներն աճել են 21.6 տոկոսով՝ կազմելով 1148.1 մլրդ դրամ, որից հարկերը և տուրքերը նույնպես աճել են 21.6 տոկոսով՝ կազմելով 1079.1 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը մասամբ պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների կտրուկ աճով:

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերի աճը, և դրա բաղադրիչների նպաստումները, %




Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում կապիտալ ծախսերի թերակատարման երևույթն ավելի խնդրահարույց է դառնում: ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել են 1053.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 9.8%-ով, որը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճով: Ընթացիկ ծախսերն աճել են 9.0 տոկոսով՝ պայմանավորված հիմնականում սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների ձեռքբերման աճով: Կապիտալ ծախսերը (ոչ

Ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում աճել են 22.8 տոկոսով՝ կազմելով 71.7 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերի աճը պայմանավորված է միայն ցածր բազայով, այսինքն՝ 2018թ. նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերը զգալիորեն թերակատարվում էին: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի պլանն ինն ամիսների համար կազմում է մոտ 165 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 234.2 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բյուջեի հավելուրդը կազմել է 95.1 մլրդ դրամ: Հավելուրդի գոյացումը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների գերակատարմամբ: 2019թ. ճշտված պլանով նախատեսվում է տարեվերջին ունենալ 153.1 մլրդ դրամ պակասուրդ, որն անիրատեսական է փաստացի տվյալների պայմաններում:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2019թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,539.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 6.1 տոկոսով: Նախորդ ամսվա (օգոստոսի վերջի) նկատմամբ կառավարության պարտքը աճել է 79.6 մլն ԱՄՆ դոլարով (1.2%-ով): Ընդ որում, ներքին պարտքը նվազել է 58.8 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքն աճել է 138.4 մլն դոլարով: Սակայն անտրամաբանական է, որ ունենալով 95.1 մլրդ դրամ հավելուրդ, կառավարությունը նոր պարտք է ներգրավում:

2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ կառավարության ընդհանուր պարտքն աճել է 166.2 մլն դոլարով (2.6%-ով), ներքին պարտքն աճել է 117.5 մլն դոլարով (8.5%-ով), իսկ արտաքին պարտքն աճել է 48.7 մլն ԱՄՆ դոլարով (1.0%-ով): 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ արտաքին պարտքի կշիռը նվազել է մոտ 1.2 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպն ավելի է նվազել: Հունիսից սկսած գնաճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ սեպտեմբերին հասնելով 0.5 տոկոսի: Գնաճի նման ցածր տեմպերը ստիպել են ՀՀ կենտրոնական բանկին այս տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ սեպտեմբեր ամսին, նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 5.5%, որը, սակայն, բավարար չի եղել սեպտեմբեր ամսվա գնաճն արագացնելու համար:

6.2. Ավանդներ և վարկեր


Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %



2019թ. սեպտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. սեպտեմբերի նկատմամբ կազմել է 16.3


տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին մոտ 2.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 8.6 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 5.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճի տնտեսության ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-սեպտեմբեր, %



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 15.7 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.9 տոկոսային կետով (աճը՝

34.5%), ինչպես նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 39.2%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 21.3%)՝ համապատասխանաբար 6.9 և 3.3 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը նվազել է 7.6%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -1.3 տոկոսային կետով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը շարունակել է արագանալ: Սակայն, արդյունաբերության աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է հանքագործական արդյունաբերության աճի արագացմամբ, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին 1.9 տոկոսային կետից դարձել է 2.8 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մետաղական հանքաքարի արդյունահանման 15.4 տոկոս աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերությանը կազմել է 2.8 տոկոսային կետ:

2. Ներմուծման աճը վերականգնվել է, սակայն շարունակում է բավական ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ներմուծման ծավալների աճը առավելապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման աճով: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են կամ աճել աննշան չափով: Առավել նշանակալի է «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների կրճատումը, որը ներմուծման ընդհանուր աճին նպաստել է -2.5 տոկոսային կետով: Ընդ որում, այս ապրանքախմբի ներմուծման կրճատումը արագացել է՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշից վատթարանալով 1.3 տոկոսային կետով: **Սա մտահոգիչ ազդանշան է, քանի որ այս ապրանքախմբում ընդգրկված են հիմնականում ներդրումային բնույթի ապրանքներ, հետևաբար դրա կրճատումը մատնանշում է ցածր ներդրումային պահանջարկի մասին:**

3. Հարկաբյուջետային քաղաքականության «խնայողական» վարքագիծը դեռևս պահպանվում է: Պետական բյուջեի հավելուրդը կազմել է 95.1 մլրդ դրամ, որը թեև նվազել է նախորդ ամսվա նկատմամբ, սակայն դեռևս բավական հեռու է ծրագրային ցուցանիշից: 2019թ. ճշտված պլանով նախատեսվում է տարեվերջին ունենալ 153.1 մլրդ դրամ պակասուրդ, որն անհրաժեշտական է փաստացի տվյալների պայմաններում:

4. Պետական պարտքն աճել է: Անտրամաբանական է, որ ունենալով 95.1 մլրդ դրամ հավելուրդ, կառավարությունը նոր պարտք է ներգրավում: 2019թ. վերջին եռամսյակում 95.1 մլրդ դրամ ծախսելը և, բացի դրանից, 153.1 մլրդ դրամ պակասուրդ ապահովելը կարծում ենք իրատեսական չէ, հետևաբար արտաքին պարտքի ներգրավման անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**